ConverseBank

«11» 10 2017

№ COD/1041

ԵՐԱՇԽԻՔ N COD/1041

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն և "Պանտեռա Սիքյուրիթի" ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք "Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման" N ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-17/2 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում: Սույն երաշխիքով բենեֆիցիար է համարվում ՀՀ Ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ բենեֆիցիար):

2. Երաշխիքով Կոնվերս Բանկ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի պահանջով սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենֆիցիարին վճարել մինչև 12,600,000 (տասներկու միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի ՀՀ ՖՆ գործառնական վարչությունում բացված 900005028106 բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 31.08.2018թ ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը՝ սույն երաշխիքի պայմաններին դրա համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա Բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

ՓԲԸ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Բ.ԵՐԵՎԱՆ CJSC 26/1 V. SARGSYAN
ՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ FOR CREDIT OPERATIONS

73849

0001

«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 0010, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Վազգեն Սարգսյան փող., 26/1, Հեռ.՝ (+374 10) 511200, 511211, Ֆաքս՝ (+374 10) 511212

Converse Bank CJSC
26/1, Vazgen Sargsyan Str., Republic Square, Yerevan 0010, RA
Tel.: (+374 10) 511200, 511211, Fax: (+374 10) 511212

www.conversebank.am

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05% չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը չի համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարկային գործառնությունների բաժնի պետի տեղակալ

Ինեսա Կազարովա

Կատարող՝ Գ.Մովսեսյան

Հեռ; 55 14 67